ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2019/192

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 24.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20452-2019 գրությամբ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 09.12.2019թ. թիվ 04/31.2/28910-19 գրության հիման վրա, 12.12.2019թ. թիվ 26/26-1/20452-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է իրականացնել համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժին՝ տեխնիկական հսկողության ծառայություններ /Սանահին վանքային համալիր՝ Սբ.Ամենափրկիչ եկեղեցու տանիքներ/, 2-րդ չափաբաժին՝ տեխնիկական հսկողության ծառայություններ /Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի տանիք/:

1-ին չափաբաժնի մասով սահմանվել է 468 113 նախահաշվային գին:

2-րդ չափաբաժնի մասով սահմանվել 811 275 նախահաշվային գին:

Նշված Ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1.1 կետի համաձայն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, սակայն չի բավարարում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով Կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել

«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Իսկ արդեն 05.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, չի շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող անհամապատասխանությունները և նույն արձանագրությամբ էլ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընկերությունը նշել է, որ «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է իրականացնել համապատսխանաբար՝

1-ին չափաբաժին՝ տեխնիկական հսկողության ծառայություններ /Սանահին վանքային համալիր՝ Սբ. Ամենափրկիչ եկեղեցու տանիքներ/.

2-րդ չափաբաժին՝ տեխնիկական հսկողության ծառայություններ /Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի տանիք/:

1-ին չափաբաժնի մասով սահմանվել է 468 113 ՀՀ դրամ նախահաշվային գին:

2-րդ չափաբաժնի մասով սահմանվել 811 275 ՀՀ դրամ նախահաշվային գին:

«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված չափաբաժինների մասով առաջարկվել է համապատասխանաբար՝

1-ին չափաբաժնի մասով՝ 199 200 ՀՀ դրամ գնային առաջարկ /ներառյալ ԱԱՀ/:

2-րդ չափաբաժնի մասով՝ 249 600 ՀՀ դրամ գնային առաջարկ /ներառյալ ԱԱՀ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելուց հետո հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Մինչդեռ՝ 29.11.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրելով, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որոշել է նաև գնահատել ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը և արձանագրել, որ ՍՊԸ-ն չի բավարարում Ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, այն է՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2 չափաբաժինների մասով

նախահաշվային արժեքները չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և այն հանգամանքը, որ Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է բացառապես Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից իր հայտով ներկայացնում է միայն հայտարարություն՝ ուստի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ այս պարագայում, երբ Ընթացակարգի 2 չափաբաժինների մասով նախահաշվային արժեքները չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը՝ գնահատեր ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

Ընկերությունը հայտնել է, որ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա հրավերով ընդհանրապես չի սահմանվում պահանջ հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասով:

Ընկերությունը նշել է, որ տվյալ ընթացակարգի 2 չափաբաժինների մասով նախահաշվային արժեքները գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցելու պայմաններում մասնակցի վրա դրվել է Կարգի 63-րդ կետի խախտմամբ ոչ իրավաչափ պահանջ՝ ֆինանսական միջոցների որակավորման չափանիշների մասով, որի արդյունքում ոչ միայն մասնակցի հայտը մերժվել է, այլ նաև Ընկերությունը կանգնել է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև: Մինչդեռ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն մասնակցել է տվյալ գնման ընթացակարգին՝ նկատի ունենալով, որ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում նախահաշվային արժեքները չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, և համապատասխանաբար չի պահանջվում ֆինանսական միջոց:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի վրա «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով դրված պարտավորությունը իրավաչափ չէ, հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոններին, ուստի ոչ իրավաչափ պահանջի մասով շտկում չկատարելը չի կարող դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

2. Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ նաև մի շատ կարևոր հանգամանք. սույն Ընթացակարգով «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ»

ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտարարություն /նման հայտարարություն հրավերով նախատեսված չէ/, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից: Մինչդեռ, Կարգի 32-րդ կետի եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Ընկերությունը գտնում է, որ նման բովանդակությամբ հայտարարության բացակայության պայմաններում «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ամփոփելով վերոգրյալը Ընկերությունը խնդրել է «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/192 ընթացակարգի շրջանակներում 23.12.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.12.2019թ. թիվ 04/31.2/28910-19 գրությամբ հայտնել է, որ նախարարության կողմից գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով կազմակերպված տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 22-ին «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից հայտարարվել է որպես առաջին տեղ զբաղեցնող

մասնակից, և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե վերջինիս՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, ինչպես նաև առաջարկվել է «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը բացակայում է, իսկ վերջինիս կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և առաջարկվել է «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք շտկվել են մասնակի և «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/192 ընթացակարգի շրջանակներում 23.12.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/192 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/192 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 22.11.2019թ. հայտ է ներկայացրել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,

առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է ներկայացնելու որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.11.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն չի բավարարում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

5. Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետով, որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, չի շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող անհամապատասխանությունները, որը և հիմք ընդունելով նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20452-2019 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

09.12.2019թ. թիվ 04/31.2/28910-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՍՑ-ՆԳ-2019/192 ընթացակարգի վերաբերյալ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում ***հանձնաժողովի քարտուղարը*** նույն օրն էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով <u>երեք աշխատանքային օրվա</u> ընթացքում շտկել անհամապատասխանությունը:*** Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) ***շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար***, ***և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:*** Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ ***արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝***

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «***Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր***

տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) ***<u>չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է,</u>*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված փվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ ***<u>«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝</u>***

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից***,

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը՝ ***<u>բացառությամբ</u>*** մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և ***<u>տեխնիկական</u>***

<u>հսկողության ծառայությունների գնումների</u>, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերի կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 22.11.2019թ. հայտ է ներկայացրել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է ***գնային առաջարկ***, որի ընդհանուր արժեքը 1-ին չափաբաժնի մասով կազմել է ***<u>199 200 ՀՀ դրամ</u>***, 2-րդ չափաբաժնի մասով՝ ***<u>249 600 ՀՀ դրամ:</u>***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է ներկայացնելու որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.11.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն չի բավարարում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի

հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետով, որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, չի շտկել Ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշին վերաբերող անհամապատասխանությունները, որը և հիմք ընդունելով նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ամփոփելով վերոգրյալը արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված 17.12.2019թ. դիմել է ՀՀ ՊԵԿ-ին՝ խնդրելով հայտնել որքան է կազմում «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան (2019) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ՊԵԿ-ը հայտնել է, որ Ընկերության 2016-2019թթ. համախառն եկամուտների հանրագումարը 0 ՀՀ դրամ է:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, մինչդեռ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը ***0 ՀՀ դրամ է***, մինչդեռ Կարգի Կարգի 63-րդ կետի

1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ ***«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝***

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից***,

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը՝ ***բացառությամբ*** մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և ***տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների***, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերի կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Միաժամանակ արձանագրում եմ, որ Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը 29.11.2019թ. ծանուցվել է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից համապատասխան շտկում չի իրականացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի գտնում եմ, որ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցության հետագա դադարեցմանը:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ այս պարագայում, երբ Ընթացակարգի 2 չափաբաժինների մասով նախահաշվային արժեքները չեն գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը՝ գնահատեր Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, ապա գտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետը իմպերատիվ սահմանում է, որ բացառություն են կազմում մի շարք գնումներ այդ թվում նաև տեխնիկական հսկողության ծառայությունը, ուստի հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում է, գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը, գնահատելով Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, գործել է իրավաչափ:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20452-2019 գրությամբ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**